ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/173

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.11.2018թ. թիվ 26-3/20457-18 գրությամբ «Այ Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 18.10.2018թ. թիվ ԱՎ/01/08.4/421-18 և 03.11.2018թ. թիվ ԱՎ/01/08.4/457-18 գրությունների պատճենների հիման վրա, 09.11.2018թ. թիվ 26-3/20457-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Այ Սերվիս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Այ Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Այ Սերվիս» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 22.11.2018թ. ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի /այսուհետ նաև՝ Պատվիրատու/ կողմից «Անվտանգության, մուտքի հսկողության, տեսահսկման համակարգերի սպասարկման և վերանորոգման» ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2018-126» ծածկագրով գնման ընթացակարգ /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով 13.09.2018թ. հայտ է ներկայացրել միայն «Այ Սերվիս» ՍՊԸ-ն /այսուհետ նաև Ընկերություն/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.09.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Այ Սերվիս» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի /այսուհետ նաև՝ Կոմիտե/ պարզելու ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու որվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու կամ չունենալու վերաբերյալ:

Պատվիրատուն 18.10.2018թ. ԱՎ/01/08.4/421-18 գրությամբ հայտնել է, որ 19.09.2018թ. հարցման ի պատասխան, ՀՀ ՊԵԿ-ը 24.09.2018թ. եզրակացությամբ հայտնել է, որ «Այ Սերվիս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 59 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություններ:

Պատվիրատուն 18.10.2018թ. www.gnumner.am կայքում հրապարակել է «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2018-126» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը, որի համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով:

«Այ Սերվիս» ՍՊԸ-ն սակայն համաձայն չէ վերը նշված որոշման և Կոմիտեի եզրակացության հետ քանի որ, Հայաստանի Հանրապետության կառավարությանն

առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանով սահմանված հավելվածի՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի 13.09.2018թ. /հայտը ներկայացնելու օրվա/ դրությամբ Ընկերության հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների, միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա պաշտոնական քաղվածքի /այսուհետ նաև՝ Քաղվածք/ համաձայն՝ Ընկերությունը ընդհանրապես չունի հարկային պարտավորություններ:

Ընկերությունը հիմք ընդունելով վերոնշյալ պաշտոնական քաղվածքից վերցված տվյալները և համոզված լինելով, որ «Այ Սերվիս» ՍՊԸ-ի հարկային պարտավորությունների չափը չի գերազանցում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը, հայտ է ներկայացրել և մասնակցել է Ընթացակարգին:

Սակայն, ի զարմանս Ընկերության, պարզվել է, որ «Այ Սերվիս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ:

Ընկերությունը նշել, որ դրոշմանիշային վճարի մասով քաղվածքի մեջ որևէ նշում չկար և Ընկերությունը չէր կարող տեղեկանար կամ կանխատեսեր, որ դրոշմանիշային վճարը հանդիսանում է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ, քանի որ 2018թ. ընթացքում մասնակցելով բազմաթիվ մրցույթների նման խնդիր Ընկերության մոտ չի առաջացել: Եթե դրոշմային վճարը համարվում է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, ապա այս պարագայում ստացվում է, որ Ընկերությունը 2018թ. ընթքացքում պետք է ունենար այդ պարտավորությունը և այն պետք է արտացոլված լիներ թե Քաղվածքի, թե Կոմիտեի կողմից տրված եզրակացություններ մեջ, սակայն մինչև այս մրցույթը նման խնդիր չի առաջացել: Իսկ եթե Կոմիտեի կողմից կատարվել է նման փոփոխություն, ապա այս պարագայում առնվազն առկա է իրազեկման խնդիր, որպեսզի մրցույթի մասնակիցները տեղեկացված լինեին և կատարեին համապատասխան վճարումները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ նաև՝ Օրենք/ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն

այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ

մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Ընկերությունը հայտնել է, որ, որպես ապացույց այն մասին, որ Կոմիտեի կողմից արձանագրված 59 000 ՀՀ դրամի պարտավորությունը հանդիսանում է դրոշմանիշային գծով պարտավորություն, կից ներկայացվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ 1 բաժնի կողմից 20.11.2018թ. տրված թիվ 3089 տեղեկանքը, այն մասին, որ Ընկերությունը 13.09.2018թ. /հայտը ներկայացնելու օրվա/ դրությամբ ունի 59 000 ՀՀ դրամի չափով միայն դրոշմանիշային վճարների գծով պարտավորություններ:

Ընկերությունը նշել է, որ «Այ Սերվիս» ՍՊԸ-ն չի խախտել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջները, քանի որ տվյալ դեպքում, Ընկերությունը

հանդիսացել է միակ մասնակիցը և Ընթացակարգի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացնելու պայմաններում ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, սակայն Կոմիտեի կողմից տրված եզրակացության պատճառով զրկվել է պայմանագիր կնքելու հնարավորությունից, դրանով իսկ «մեկուսացվելով» պայմանագրի կողմ հանդիսանալուց:

Ընկերությունը գտնում է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ «իրականում» չի ունեցել, քանի որ, ինչպես արդեն նշվել է Ընկերությունը հիմք ընդունելով պաշտոնական Քաղվածքից վերցված տվյալները և համոզված լինելով, որ «Այ Սերվիս» ՍՊԸ-ի հարկային պարտավորությունների չափը չի գերազանցում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը, հայտ է ներկայացրել և մասնակցել է Ընթացակարգին, տեղեկացված կամ իրազեկված չլինելով, որ Կոմիտեն դրոշմանիշային վճարները այսուհետ դիտարկվում է որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ և այդ պարտավորությունները չկատարելը կարող է դիտարկվել որպես ժամկետանց հարկային պարտավորություն, ինչն էլ հիմք է հանդիսացել Ընկերության հայտը մերժելուն:

Ընկերությունը խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության գրության հիման վրա «Այ Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ նախաձեռնված ընթացակարգը մերժել՝ «Այ Սերվիս» ՍՊԸ-ին չնդգրկել ցուցակում:

«Այ Սերվիս» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 16.11.2018թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստերը.</u>

Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.10.2018թ. թիվ

ԱՎ/01/08.4/421-18 և 03.11.2018թ. թիվ ԱՎ/01/08.4/457-18 գրություններով հայտնել է, որ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2018 թվականի սեպտեմբերի 14-ին անվտանգության, մուտքի հսկողության, տեսահսկման համակարգերի սպասարկման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2018-126» ծածկագրով ընթացակարգի մասնակից՝ «Այ Սերվիս» ՍՊԸ-ի վերաբերյալ Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման նպատակով սեպտեմբերի 19-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ուղարկված հարցմանն ի պատասխան՝ 24.09.2018թ. ստացված եզրակացության համաձայն՝ «Այ Սերվիս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 59 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություններ:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 16.11.2018թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2018/173 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/173 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «Անվտանգության, մուտքի հսկողության, տեսահսկման համակարգերի սպասարկման և վերանորոգման» ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2018-126» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***13.09.2018թ.*** հայտ է ներկայացրել «Այ Սերվիս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.09.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Այ Սերվիս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 24.09.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Այ Սերվիս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 59 000 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.10.2018թ. ժամը 14:30-ին կայացած նիստի թիվ 6-րդ արձանագրության համաձայն՝ մերժել է «Այ Սերվիս» ՍՊԸ-ի հայտը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.11.2018թ. թիվ 26-3/20457-18 գրությունը, Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 18.10.2018թ. թիվ ԱՎ/01/08.4/421-18 և 03.11.2018թ. թիվ ԱՎ/01/08.4/457-18 գրությունները՝ կից փաստաթղթերով, «Այ Սերվիս» ՍՊԸ-ի 22.11.2018թ. գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա

ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Այսպիսով, «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «Անվտանգության, մուտքի հսկողության, տեսահսկման համակարգերի սպասարկման և վերանորոգման» ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2018-126» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***13.09.2018թ.*** հայտ է ներկայացրել «Այ Սերվիս» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.09.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Այ Սերվիս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 19.09.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Այ Սերվիս» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 24.09.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Այ Սերվիս»***

ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 59 000 ՀՀ դրամի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.10.2018թ. ժամը 14:30-ին կայացած նիստի թիվ 6-րդ արձանագրության համաձայն՝ մերժել է «Այ Սերվիս» ՍՊԸ-ի հայտը:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 24.09.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Այ Սերվիս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 13.09.2018թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 59 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 22.11.2018թ. գրությամբ ներկայացրել է 13.09.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:

Միևնույն ժամանակ Ընկերությունը ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների սպասարկման կողմից տրված 20.11.2018թ. թիվ 3089 տեղեկանքը, համաձայն որի «Այ Սերվիս» ՍՊԸ-ի 13.09.2018թ. դրությամբ ունեցած 59 000 ՀՀ դրամ պարտավորությունը դրոշմանիշային վճարի մասով է:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ «Այ Սերվիս» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, միևնույն ժամանակ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն: Սակայն, ուսումնասիրելով 13.09.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում եմ, որ նշված քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, հետևաբար առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ՝ Ընկերությունը ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Ուստի հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, գտնում եմ, որ «Այ Սերվիս» ՍՊԸ-ն «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2018-126» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել ստանձնած պարտավորության խախտում, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.11.2018թ. թիվ 26-3/20457-18 գրությամբ «Այ Սերվիս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00124361) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ